ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/10

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/303-2022 գրությամբ «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 29.12.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-11261 գրության հիման վրա, 10.01.2022թ. թիվ 26/26-1/303-2022 գրությամբ նախաձեռնել է «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/10 ընթացակարգի շրջանակներում 17.01.2022թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.12.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-11261 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ Ձեզ է ներկայացվում Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/26» ծածկագրով ընթացակարգի շրջանակում Դանինի ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/10 ընթացակարգի շրջանակներում 17.01.2022թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2022/10 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2022/10 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ դատական դեպարտամենտի և «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի միջև ստորագրվել է թիվ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/26-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N2 հավելվածով:

2. Պայմանագիրը Գնորդի կողմից ստորագրվել է 03.11.2021 թվականին:

3. Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ապրանքի					
Հ/Հ	Չափման միավոր	Ընդհանուր քանակը	մատակարարման		
			հասցեն	Ենթակա քանակը	Վերջնաժամկետը
2	հատ	71	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	71	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
12	հատ	72	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	72	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
13	հատ	471	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	471	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
14	հատ	309	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	309	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
15	հատ	3023	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	3023	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
24	հատ	200	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	200	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
25	հատ	100	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	100	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
26	հատ	79	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	79	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

4. ՀՀ դատական դեպարտամենտը, «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին ուղղված 28.12.2021թ. թիվ ԴԴ-1-Ե-11140 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի նոյեմբերի 3-ին Դատական դեպարտամենտի և «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի միջև կնքվել է ապրանքի մատակարարման թիվ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/26-2» ծածկագրով պայմանագիրը, ըստ որի Վաճառողը պարտավորվել է Գնորդին մատակարարել նաև 71 (յոթանասունմեկ) հատ պլաստմասե աղբարկղներ:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 03.11.2021թ.: Նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 2 հավելվածի՝ մատակարարման ժամանակացույցի համաձայն, ապրանքի մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի դեկտեմբերի 3-ը (Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օր):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը՝ այն է. «Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով» և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5-րդ կետը՝ Վաճառողին ուղղված Դատական դեպարտամենտի 2021 թվականի դեկտեմբերի 20-ին թիվ ԴԴ-3-Ե10785 գրությամբ սահմանվել է ապրանքի մատակարարման նոր ժամկետ (2 օրացուցային օր): Վերը նշված գրությունը նույն օրը՝ 20.12.2021թ. ուղարկվել է Վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին: Սակայն, մինչ օրս, Վաճառողի կողմից չի կատարվել որևէ գործողություն, որն ուղղված կլիներ Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարմանը, ինչպես նաև Պատվիրատուին չի ներկայացվել որևէ փաստարկ՝ վերը նշված ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելը հարգելի համարելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Վաճառողի կողմից խախտվել է Պայմանագրի ինչպես 2.4.1-րդ կետով, այնպես էլ 2.4.2-րդ կետով սահմանված պարտավորությունները:

Համաձայն Պայմանագրի 2.1.1-րդ կետի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Պայմանագրի 2.1.7-րդ կետով սահմանված է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ 2.1.7.1-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Տվյալ դեպքում Վաճառողի կողմից մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 2.4.1-րդ և 2.4.5-րդ կետերով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով պայմանագրի 2.1.4-րդ կետի «բ» ենթակետի,

2.1.7-րդ կետի և 2.1.7.1-րդ կետի «բ» ենթակետի պահանջներով՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝

1. միակողմանիորեն մասնակի լուծում է Պայմանագիրը,
2. ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ:
3. հիշեցնում է, որ պատասխանատվություն եք կրում Պայմանագրի 6-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 28.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/303-2022 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 29.12.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-11261 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ դատական դեպարտամենտի և «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի միջև ստորագրվել է թիվ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/26-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N2 հավելվածով:

Պայմանագիրը Գնորդի կողմից ստորագրվել է 03.11.2021 թվականին:

Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ապրանքի					
Հ/Հ	Չափման միավոր	Ընդհանուր քանակը	մատակարարման		
			հասցեն	Ենթակա քանակը	Վերջնաժամկետը

2	հատ	71	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	71	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
12	հատ	72	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	72	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
13	հատ	471	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	471	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
14	հատ	309	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	309	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
15	հատ	3023	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	3023	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
24	հատ	200	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	200	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
25	հատ	100	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	100	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:
26	հատ	79	ք.Երևան, Կորյուն 15/1, Վ.Սարգսյան 5	79	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

ՀՀ դատական դեպարտամենտը, «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին ուղղված 20.12.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-10785 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Դատական դեպարտամենտի և «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի միջև 03.11.2021թ. կնքվել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/26-2» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագրի), որի հավելված 2-ով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 03.12.2021թ.-ը: Մինչ օրս առկա են չմատակարարված ապրանքներ, մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնի մասով դեռ մատակարարման է ենթակա թվով 71 (յոթանասունմեկ) հատ պլաստմասե աղբարկղ:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկվում է 2 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել մատակարարման ենթակա, դեռևս չմատակարարված ապրանքները»:

ՀՀ դատական դեպարտամենտը, «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին ուղղված 28.12.2021թ. թիվ ԴԴ-1-Ե-11140 գրությամբ, հայտնել է հետևյալը.

ՀՀ դատական դեպարտամենտը, «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին ուղղված 28.12.2021թ. թիվ ԴԴ-1-Ե-11140. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի նոյեմբերի 3-ին Դատական դեպարտամենտի և «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի միջև կնքվել է ապրանքի մատակարարման թիվ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/26-2» ծածկագրով պայմանագիրը, ըստ որի Վաճառողը պարտավորվել է Գնորդին մատակարարել նաև 71 (յոթանասունմեկ) հատ պլաստմասե աղբարկղներ: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 03.11.2021թ.: Նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 2 հավելվածի՝ մատակարարման ժամանակացույցի համաձայն,

ապրանքի մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի դեկտեմբերի 3-ը (Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օր):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը՝ այն է. «Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով» և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5-րդ կետը՝ Վաճառողին ուղղված Դատական դեպարտամենտի 2021 թվականի դեկտեմբերի 20-ին թիվ ԴԴ-3-Ե10785 գրությամբ սահմանվել է ապրանքի մատակարարման նոր ժամկետ (2 օրացուցային օր): Վերը նշված գրությունը նույն օրը՝ 20.12.2021թ. ուղարկվել է Վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին: Սակայն, մինչ օրս, Վաճառողի կողմից չի կատարվել որևէ գործողություն, որն ուղղված կլիներ Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարմանը, ինչպես նաև Պատվիրատուին չի ներկայացվել որևէ փաստարկ՝ վերը նշված ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելը հարգելի համարելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Վաճառողի կողմից խախտվել է Պայմանագրի ինչպես 2.4.1-րդ կետով, այնպես էլ 2.4.2-րդ կետով սահմանված պարտավորությունները:

Համաձայն Պայմանագրի 2.1.1-րդ կետի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Պայմանագրի 2.1.7-րդ կետով սահմանված է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ 2.1.7.1-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Տվյալ դեպքում Վաճառողի կողմից մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 2.4.1-րդ և 2.4.5-րդ կետերով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով պայմանագրի 2.1.4-րդ կետի «բ» ենթակետի, 2.1.7-րդ կետի և 2.1.7.1-րդ կետի «բ» ենթակետի պահանջներով՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝

1. միակողմանիորեն մասնակի լուծում է Պայմանագիրը,

2. ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ:

3. հիշեցնում է, որ պատասխանատվություն եք կրում Պայմանագրի 6-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 28.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>15 օրից ավելի</u>***:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղը խախտել է իր և ՀՀ դատական դեպարտամենտի միջև 03.11.2021թ. ստորագրված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/303-2022 գրությամբ «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**